



ՍԱՄՎԵԼ ԱՆԹՈՍՅԱՆ

(Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ)

ԽՈՂԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ

«Եվ ինչ երկար դարերով
Քո ժողովուրդն էր կիտել
Նմո՛ւշ-նմո՛ւշ, հա՛տ առ հատ,
Դու լիարուս-լիառառ
Ծա՛ղ տվեցիր աշխարհում»:

Այս օրերին, երբ համայն հայ ժողովուրդը թե՛ մայր հայրենիքում և թե՛ արտասահմանում հոգեպես լցված է հանճարեղ Կոմիտաս վարդապետով, առավել ակնառու է դառնում նրա հավերժական կերպարը: Իրավացիորեն Կոմիտաս վարդապետի առաքելությունը համեմատվում է Պրոմեթեոսի առաքելության հետ: Կոմիտաս վարդապետը երգի լույսի հետ մեզ բերեց սեփական արժանապատվությամբ ու հոգևոր գանձերով հպարտանալու և ապրելու կենսաբար ուժը: Բանաստեղծ Պարոյր Սևակը նշում է, որ Կոմիտաս վարդապետի անունը հայության համար դարձել է Մասիսին, ս. էջմիածնին և ս. Մաշտոցին հալխապար խորհրդանիշ: Եվ այս բոլորը արդյոք արտահայտությունը չե՞ն հանճարեղ երաժշտահանի այն մտածման, որ մեր ժողովրդի մեջ պետք է տարածել հայ երաժշտությունը, «որպեսզի ժողովրդի մեջ ազգային երաժշտության խոսքը մարմնացնա և անոր ազդեցության տակ ժողովուրդը թոթափելով իր թույլ պատյանը՝ մտնե վերակենդանացման շափողին մեջ»: Կոմիտաս վարդապետը հասել է իր նպատակին. իր անձի խորհրդանշանով նրա երաժշտությունը տարբեր մայր ցամաքներում ապրող հայախոս թե օտարախոս բոլոր հայորդիների համար հոգեղեն կերակուր է և հայությանը կապող անձեռնակերտ կապույտ: «Մայրենի երգը, — գրում է նրա շնորհալի աշակերտ Վարդան Սարգսյանը, — իր շնորհիվ դար-

ձավ ազգային միության հզոր կապ մը, մայրենի լեզվին չափ շքեղ ու մեծապանշ»:

Այս օրերին, սակայն, առավել ակնառու դարձավ, որ իր մեջ դարաշրջան խառնող հանճարեղ վարդապետի մեծությունը իր անչափելի կշռով դեռևս կարոտ է խորունկ բացահայտման. պատկերավոր ասած՝ ամեն հայ ունի իր մեջ քանդակած Կոմիտաս, սակայն Կոմիտաս-հանճարի քանդակը դեռևս չկա:

Կոմիտաս վարդապետը ժողովրդի ստեղծագործ ոգու, նրա հավաքական հանճարի հանդեպ մի ամբողջացած համոզում-տեսություն ունի, և նրա առաքելությունն այլ բան չէ, քան բացահայտել ժողովուրդ-հանճարին, անհատ հանճարի ստեղծագործական քուրայում թրծել, մշակել ժողովրդի ստեղծած գոհարները, դրանք վերստին վերադարձնել ժողովրդին. «Տվեք ժողովրդին իրա ոգով ստեղծելու զարգացած օրինակ, և նա կտա ձեզ բնական ընդարձակ ստեղծագործություն: Ոչ մի բան նրա զգայարաններից խուսափել չի կարող, դրա համար էլ խիստ բազմապիսի են ժողովրդի ստեղծագործության արդյունքները», — գրում է նա: Կոմիտաս վարդապետը հավաքել և ձայնագրել է ժողովրդական 4000 երգ, որոնցից, ցավոք, հագիլ մեկ հինգերորդն է մեզ հասել, սակայն այդ էլ բավական է նրան հայ երաժշտության գիտական ազգագրության հիմնադիր համարելու: Այս բնագավառում Կո-

միտաս վարդապետը քաղական արգասավոր է. հիշենք Մ. Աբեղյանի հետ նրա հրատարակած ժողովրդական թվական իմաստով էլ ճիշտ՝ հազար ու մի խաղիկները: Մյուս կողմից՝ հայտնի է, որ երկար ժամանակ Կոմիտաս վարդապետը աշխատել է նաև հայտնի բանահավաք Չիթուհու հետ ինչպես Էջմիածնում, այնպես էլ Պոլսում:



Կոմիտաս վարդապետ

Ժամանակակիցների վկայությամբ Կոմիտաս վարդապետը հատկապես ամառվա ամիսներին շրջում էր գյուղերն ու գավառները՝ ժողովրդի բերանից անձամբ գրի առնելու նրա երգի բառերն ու երաժշտությունը:

Կոմիտաս վարդապետն իր մանկությունն անց է կացրել գավառում, իր ծննդավայր Քյոթահիսպում, բնության գրկում՝ պարզ ու հասարակ մարդկանց մեջ: Նրա բնատուր երաժշտական ակաճը լցված էր իր ծննդավայրում պատմվող հեքիաթներով և երգվող ժողովրդական ստեղծագործություններով: Սակայն բնագող չէ, որ Կոմիտաս վարդապետին առաջնորդեց դեպի ժողովուրդը, այլ այն համոզումը, թե՛ «Գավառն իմ աչքին առջև կպատկերանա իբրև սրբավայրը հայ գեղարվեստի նշխարներուն, հոն կտեսնեմ հայ երգը՝ հայ գեղջուկին շուրթերուն վրա,

հայ գուրջանը, հայ գեղջուկն իր արորին ու մաճին հետ, ու քարերն անգամ նվիրականություն: Լինիշեցնեն ինձ: Այդ քարի բեկորներն են մեր հայրենիքը, հոն են շեշտերը մեր գեղարվեստին և ոչ թե մայրաքաղաքներուն մեջ, ուրկե մենք գավառը կդիտենք իբրև խավարի վայր»: Այս և՛ «Ես պիտի հասնիմ իմ բուն նպատակին»-մեր հայ ժողովրդական երաժշտության ձայները դուրս բերեմ հայրենի ավերակներեն»: Այս իմաստով Կոմիտաս վարդապետը մեր մշակույթի պատմության ժողովրդասիրական, դեմոկրատական ոգու չափազանց մեծ մի արտահայտությունն է: Դարավոր կաղնու նման մայր հողի ու ջրի հետ ունեցած կապվածությունը միայն որպես առաքելության սկզբունք կարող էր լինել Կոմիտաս վարդապետի համար նրա հետևյալ արտահայտությունը. «Ժողովրդի դպրոցը բնական դպրոց է, ոչ արվեստական: Կանխամտածված ժողովրդական դպրոցի ուսուցիչը բնությունն ինքն է, առարկաները՝ բնությունն իր ամբողջ կազմով ու մարդկային կյանքն իր ամբողջ էությամբ կամ արտաքին ու ներքին աշխարհը, իսկ վկայականը՝ ժողովրդի փորձառությունը»:

Իսկ նրա բանաստեղծությունները... ո՞ր գրաբնագաղաղ կամ բանագետը կարող է դրանք տարբերել ժողովրդականից. ինչպես՝

Ո՛վ է տեսել ծովի ծավալ

Հովի թավալ.

Կամ արտերում հասկի տալիք

Ոսկի ալիք:

Կարելի է առանց վարանման ասել, որ եթե Կոմիտաս վարդապետը բնատուր բացուիկ երաժշտական հանճար էլ չծնվեր, նրա կոչումը դարձյալ ժողովրդական ստեղծագործության հավաքումը, գրառումը, հրդկումն ու տարածումը պիտի լիներ, ինչ որ արեց էլ նրա մեկ ուրիշ շնորհալի ժամանակակիցը՝ Էջմիածնի միաբան հայր Սահակ Ամատունին՝ հավաքելով և մեծ խնամքով հրատարակելով հայոց բառ ու բանը: Կոմիտաս վարդապետը ժողովրդական ստեղծագործության հանդեպ ունեցած իր այս համոզումը ամրապնդեց նաև իր սաների մեջ:

Այսօր ոչ ոքի համար փինելի չէ, որ ս. Էջմիածինը, Գևորգյան ճեմարանը և ընդհանրապես Էջմիածնի հոգեպարար միջավայրը թրքախոս գեղջուկ Սողոմոնից հրաշակերտեց հայ երգի հանճարին, որին դեռևս 1901 թ. «20-րդ դարու Շնորհալին» անվանեց Ա. Չոպանյանը:

Գևորգյան ճեմարանում ստացած կանոնավոր կրթությամբ զուգահեռ պատանի Սողոմոնը հնարավորություն ունեցավ խորասուզվելու մեր նախնյաց խորախորհուրդ

մատյանների մեջ՝ փորձելով գտնել հայ խագործության բանալին: Հայտնի է, որ 1910 թ. Պոլիս մեկնելուց հետո էլ Կոմիտաս վարդապետը չմոռացավ Էջմիածինը: 1913 թ. ամ-

որն առավելագույնով ունեցավ Կոմիտաս վարդապետը՝ Բեռլինում երաժշտական կոնյուկցիոն ստանալով: Նրա համար հայ ինքնուրույն երաժշտության տեսականորեն գո-



Կոմիտաս վարդապետի հուղարկավորությունը. դամբանական է խոսում Ֆրանսիայի երաժշտագիտական ընկերության նախագահ Ամետե Կաստունե (Փարիզ, 1935, հոկտեմբեր 27)

ուանը եկավ Էջմիածին, ինչպես գրում է Ա. Չոպանյանին հասցեագրած նամակում, «մատենադարանում աշխատելու և գեղջուկ երգեր հավաքելու»: Այս բոլորից դուրս՝ միայն այստեղ նա հնարավորություն ուներ լսելու և գրի առնելու ու ճշտագրելու Հայաստանի այլևայլ գավառներից ճեմարան ուսանելու եկած սաներին, որոնք իրենց հետ որպես հայ հոգու անբաժան մաս բերում էին հայ բանավոր ստեղծագործությունն ու երգը: Մյուս կողմից՝ հենց հայոց բնաշխարհում գեղջուկի բերանից լսում էր նրա ստեղծագործությունը: Չմոռանալու նաև նշելու Մայր տաճարի խնկարույր կամարների տակ նրա լսած ու երգած շարականները: Ահա այս բոլորը հարկավոր էր մշակել, հղկել, հայ երգի վրայից վերցնել դարերի ընթացքում նստած օտար թանձր փոշու խավերը, ի հայտ բերել տոհմիկ հայկականը, ապացուցել, թե հայ երաժշտությունը ասորա-քյուզանդական կամ հնդկա-պարսկական երաժշտության ազդեցության ծնունդ չէ: Իսկ այս բոլոր հարցերը լուծելու համար հարկավոր էր ունենալ նաև տեսական բարձր պատրաստականություն,

յություն ունենալու մեծագույն ապացույցը հայոց լեզվի գոյության փաստն էր: Նա որևէ ազգի երաժշտությունը դիտում էր որպես մի այնպիսի ամբողջական համակարգ, ինչպես լեզուն. «Երաժշտությունն էլ, լեզվի պես,—գրում է նա,— ունի իր քերականական օրենքներն ու ոլորմանց տարբեր ոճերը, որոնք միշտ զանազան են՝ զանազան ազգերի համար»: Իսկ մի այլ առիթով ասել է. «Հայ մեղեդու ելևէջները անձուկ կապ և նմանություն ունեն հայ առողանության շեշտերի հետ: Հետևաբար հայ երգը ունի հիշտ այն առանձնահատկությունները, ինչ հատուկ է հայ լեզվին»: Ավելին, երկար տարիներ գլխահակ աշխատելով և հայ մատյանների մեջ փնտրելով հայ խագործության բանալին, Կոմիտաս վարդապետը, հայտնի բանահավաք Չիթունու վկայությամբ, հույսը կտրել էր գրավոր աղբյուրներից՝ լուծելու այդ հարցը: «Առձեռնը անգոր է բոլորովին, պետք է փնտրել անգիր աղբյուրների մեջ: Հավատում եմ, որ ժողովրդի բարբառին մեջն է դուրս պիտի բերեմ մեր երաժշտական

խագերի բանալին»,—ասել է նա: Այս իմաստով միանգամայն ճիշտ է Կոմիտաս վարդապետի առաքելությանը տրված այն բնութագրումը, թե նա ոչ միայն բացահայտեց հայ ժողովրդի համընդհանուր երաժշտական լեզուն, այլև բացահայտեց նույնիսկ նրա բարբառները: Ինչպես Հ. Աճառյանը իր «Հայ բարբառագիտությամբ» անդարձ կորուստից փրկեց արևմտահայ բարբառները (գոնե առավել ընդհանուր նկարագրությամբ), մեր ժողովրդական լեզվի գանձերը, այնպես էլ Կոմիտասն անդարձ կորստից փրկեց հայ երգը: Կոմիտաս վարդապետը շտապում էր՝ գերմարդկայնորեն աշխատելով, հայ մեղեդին արձանագրում, քանի որ նախասահմանված էր, որ ինքն անի ու ամբողջացնի այդ նվիրական գործը, որը միայն մի քանի տարի հետո ուշացած, շատ ուշացած պիտի լիներ: Եվ նրա՛ն, միայն նրա՛ն հաջողվեց ցույց տալ աշխարհին, որ հայն ունի իր ինքնուրույն երաժշտությունը, և դա իր բնական ցեղական բազմօժտվածությանը համապատասխան՝ գեղարվեստական բարձր արժեք է ներկայացնում, ավելի հարագատ, քան ուրիշ շատ ժողովուրդների մեջ, «ավելի վսեմ, քան արևելյան ուրիշ ազգերու մոտ»:

Զարիազանց առողջ են և գիտական նորմայի արժեք ունեն նաև Կոմիտաս վարդապետի տեսակետները ժողովուրդների լեզվի, գրականության և երաժշտության փոխադեցությունների վերաբերյալ. «Ազգի մը լեզուն ու գրականությունը կարող են ձևափոխվել ու զարգանալ՝ օրինակ առնելով ուրիշ ազգերեն, քայց երբ ան ինքնահատուկ լեզու և գրականություն ունի, ունի և ինքնուրույն երաժշտություն: Ամբողջ արևմտյան ազգերը զարգացան՝ սնունդ առնելով հին հունական քաղաքակրթության բեկորներեն՝ լատինականի միջոցով. քայց և այնպես, յուրաքանչյուր արևմտյան ազգ ունի ուրույն երաժշտություն, որ ո՛չ հույն է և ո՛չ լատին»: Այս նյութի շուրջ զարգացնելով իր միտքը՝ Կոմիտաս վարդապետը ճշտորեն նկատում է, որ աշխարհի վրա անխառն ու անապակ երաժշտություն չկա: Եվ այսպես, հայ մշակույթի հանդեպ ունեցած իր բոլորանկեր նախանձախնդրության շնորհիվ Կոմիտաս վարդապետը ի տես և ի լուր աշխարհի հաղորդեց հայ ժողովրդի ստեղծագործ ոգու այնպիսի անգնահատելի արժեքներ, որոնք հասել են մեզ անձեռնմխելի, իրենց սոհմիկ գեղեցկությամբ և շնչով: Անհատ հանճարը նույնացավ ժողովրդի հավաքական հանճարի հետ (և կա՝ արդյոք ստեղծագործ հանճարի համար առավել երանալետ վիճակ): Ինչպիսի՜ անձնական համեստություն, սակայն և ժողովրդի հետ նույնացած

լինելու ինչպիսի՜ ներքին բնակություն պետք է ունենա մարդ, որ իրեն վերագրի միայն մի պարզ սպասակորություն՝ ժողովրդական երգի ներդաշնակում, այն դեպքում, երբ դա արվում էր իրական ճգնակտրի ինքնամոռաց նվիրումով: Արտաքուստ Կոմիտաս վարդապետի արածն այնքան դյուրին էր թվում, որ նրա օրինակով ուրիշներ էլ գնացին ժողովրդի մեջ՝ մեծ վարդապետի օրինակով քաղելու նրանից ժողովրդական խոսքն ու երգը, սակայն չկարողացան զրտնել այն, ինչ փնտրում էին, թեև կար, և հանճարեղ երաժիշտը գտնում ու գրի էր առնում:

Դժբախտաբար դեռ քիչ է ուսումնասիրված Կոմիտաս-հայրենասերն ու քաղաքացին (ասենք, նրա բազմամակդիր անունը հենց իր արած գործն է), սակայն իր ասույթներից երևում է, թե ինչ աստիճանի իմաստ ու նշանակություն էր տալիս նա հայ երգին: «Երաժշտությունը պետք է հոգիներ բոցավառի»,—ասել է հանճարեղ Բեթովենը: Այսպես էր ընկալում երաժշտության դերը և հայ Բեթովենը. «Ինձ համար չկա ուրիշ երկինք, քան իմ ժողովրդի հարազատ հոգին»,—գրել է Կոմիտաս վարդապետը: Այս իմաստով չափազանց նշանակալից է Աբեղյան—Կոմիտաս վարդապետ գործակցությամբ ստեղծված «Լո-Լո» քայլերգի ստեղծագործական պատմությունը: Կոմիտաս վարդապետը ճեմարանի իր ավագ պաշտոնակից Մ. Աբեղյանին խնդրում է «հայացնել» այդ հին քայլերգը: Վերջինս սիրով է հանձն առնում և գրում է մեզ հայտնի բնագիրը, և Կոմիտաս վարդապետը հայերեն բնագրի հիման վրա եղանակով է հայացնում այդ քայլերգը՝ արձագանքելով հայ ազատագրական շարժումներին: Հետաքրքրական են այս կապակցությամբ նրա հետեվյալ խորհրդածությունները.

«...Ի տես այդ զարթոնքի, մենք չէինք կարող վաճի պարիսպների ներսը քաշվել, որ 1895 թվից այս կողմը հարյուր-հազարավոր գաղթականության սիրտ պատռող ողբ ու կոճն են լսել ու տեսել և միապաղաղ շարական և գեղջկական սիրտ երգեր լսել ու լսեցրել: Մենք էլ թող ահա... մեր այս «Միփանա քաջերով» մեր տուրքը տված լինենք ինքնապաշտպանության գաղափարին» (Յ. Բրուսյան, «Կոմիտաս», էջ 164—165): Ահա Կոմիտաս քաղաքացին...

Ներգործության իր բացառիկ ուժով այդ քայլերգը տիրեց հայ հոգիներին: Տարիներ հետո հայ գեղանկարչության նախապետը՝ Մարտիրոս Սարյանը, պիտի խոստովաներ իր հոգու մի գաղտնիքը. «Վրձնով ինքնանկարը» նկարելիս Կոմիտասի «Լո-Լո»-ն էի մտաբերել: Այն մինչև նկարի ավարտը հրնչեց, գորացավ: Ապա և՛ «Ես Հայաստանին

նվիրված մի եռանկյար ունենալ: Կենտրոնում Արարատյան դաշտն է, հետևում Մասիսներն են բարձրանում: Դաշտի ու Մասիսների միջև անձրևող ամպ կա, դա Կոմիտասն է: «Անձրևն եկավ շաղալեն» երգն էի լսում, երբ ստեղծում էի այդ կտավը»:

աշխարհիկ մեղեդիները հարազատ քույրեր են. այս իմաստով մեծապես շահեկան է 1905 թ. «Մշակ»-ում տպագրված նրա հոդվածը «Հայ ժողովրդական և եկեղեցական երգերը» վերնագրով: Ըստ հեղինակի, մականնասային, ոչ խորագին հետազոտության



Կոմիտաս վարդապետի հուղարկավորությունը. դամբանական է խոսում Ա. Չոպանյանը (Փարիզ, 1935 հոկտեմբեր 27)

Որ Կոմիտաս վարդապետը հայ երգը հայ ժողովրդի գոյատևման գործալիզ է համարում, երևում է նաև 1913 թ. Ա. Չոպանյանին գրած նամակում, որտեղ քաջալերելով վերջինիս՝ հայ գրականությունը Եվրոպային ծանոթացնելու իր նվիրական գործունեության համար, գտնում է, որ «ավելի զորեղ զենք չունենք, քան մեր հին ու նոր՝ եկեղեցու ու աշխարհիկ գիտական ու գեղարվեստական կարողությունները ցուցադրել, որ տեսնեն, թե իբր ողորմություն չէ, որ խրճրում ենք, այլ իբր մարդկային զարգացման գործալիզ ազգ ենք հրապարակ եղում.... մեր ունեցածը անընկճելի և անխորտակելի է՝ հայոյ սիրտն ու հոգին է իբրև զենք շուշում» (Պատմա-քանասիրական հանդես, 1958 թ., հմ. 1, էջ 265):

Կոմիտաս վարդապետի երաժշտության մեծության ըմբռնումը թերի կլիներ, եթե նրան նկատի չունենանք որպես հայ հոգևոր մեղեդիների անգուցական մշակող: Կոմիտաս վարդապետի համար հայ հոգևոր և

արդյունք է ունակ այն պնդումը, թե հայ հոգևոր և աշխարհիկ երգերը տարբեր նկարագիր ու բնույթ ունեն: Իրականում հայ հոգևոր մեղեդիները նույն հայ ժողովրդի տոհմիկ ստեղծագործության դրոշմն են կրում: Իսկ այդ երաժշտությունը տխուր ու ծանր լինելուց ավելի պայծառ է ու զվարթ: «Հայ երաժշտությունը ոչ միայն մեղկ ու տխուր չէ, այլ համակ ուժ է ու կենդանություն, ու իր մեջ կանուցանե փիլիսոփայությունն իսկ, ոգին իսկ իր ցեղին, որովհետև երաժշտությունը մաքուր հայելին է ցեղին, ամենեն հարազատն ու կենդանին անոր բոլոր արտահայտությանց մեջ. կենդանի՝ որքան կենդանի է այդ ցեղը, ուժեղ՝ որքան ուժեղ է իրեն ծնունդ տվող ժողովուրդը»: Եվ իրոք, սրա լավագույն վկայությունն է մեր «Պատարագի» կոմիտասյան մշակումը, որտեղ բնագրային բովանդակությանը համապատասխան հնչում է զվարթ մեղեդին: Հիշենք թեկուզ «Օրհնեա՛լ է Աստուած» և «Քրիստոս ի մեջ մեր յայտնեցա՛» հատված-

ները: Այստեղ ևս Կոմիտաս վարդապետը նույնն արեց, ինչ հայ ժողովրդական երգի մշակման ժամանակ, այն է՝ Համբարձում պապակաների հունավարի կամ թրքավարի երգած հայ մեղեդիների մեջ որսաց գլխավոր, տոհմիկ մեղեդին և ըստ նմին մշակեց ամբողջը: Եվ այսօր երաժշտական ակամջ և հայ երաժշտության զգացում ունեցող ո՞ր հայը կարող է անջրպետել կոմիտասյան հայ հոգևոր և աշխարհիկ մեղեդիները: «Երկրագործի երգ»-ում, «Կալի երգ»-ում և այլո՛ր, կարծես, նույն հոգևոր քաղցրավոր մեղեդին է հնչում, ինչպես որ «Պատարագի» վերոհիշյալ հատվածներում, նույն ժողովրդական աշխարհիկ մեղեդին է հնչում: Սակայն հոգեվոր երաժշտության կոմիտասյան մշակման նշանակությունը սրանով չի սահմանափակվում: Այն չափով, որ Կոմիտաս վարդապետը հայ երաժշտության նախասակունքները հասավ, բազմահմուտ արվեստաբան Շահան Պերպեյանի արժեքավոր դիտողությամբ, «անոնց լույսին տակ հայ երաժշտությունը կներկայանար որպես այն թերևս միակ արվեստը, որ կորսված հին հունական և արիական երաժշտության մասին կենդանի գաղափար մը տալու կոչված էր»: Կոմիտաս վարդապետի հանճարի՝ ազգայինից ավելի միջազգային նշանակություն ունենալու փաստն էր, անշուշտ, որ մեր դարի խոշոր երաժիշտ Կլոդ Դեբյուսիին խոնարհեցրեց մեծ վարդապետի առաջ: Իսկ մյուս կողմից՝ շվեյցարացի լրագրողը 1907 թ. Կոմիտասին ունկնդրելուց հետո անձկությամբ բացականչում էր. «Հայաստանը լեռների ու հովիտների մի երկիր է մեզի նման: Ծվեցարիան քույր մի երկիր է իր բնությամբ, սակայն հայերը ի՞նչ հրաշալիքներ են հանել իրենց բնության ներշնչումներից, միևնույն մեղք...»: Եվ իրոք, կոմիտասյան հանճարը սրտի բաբախյուն, անձնավորում, շունչ ու կենդանություն տվեց հայոց լեռներին, ձորերին, առվակներին, աղոթքի աստիճանի ու նրա մաքրությանը հասնող բյուրեղացումով արտահայտեց հայ շինականի սրտի թրթիռները: Գուցե կարելի է մտածել, թե ինչու նա մեծ կտավի երկեր չստեղծեց, օպերա, սիմֆոնիաներ չգրեց: Ինչո՞ւ չգրեց, գրեց և ավելի քան: Ներքին

կառուցվածքի ամբողջականությամբ և մեղեդիների բազմազանությամբ ո՞ր օպերային կզիջի Կոմիտաս վարդապետի մշակած հարսանեկան երգերի շարքը: Եվ վերջապես, ոչ միայն հայ մարդու, այլև օտարների համար ևս Կոմիտաս վարդապետի գողտրիկ երգերը օլիպիանահանգույն խորություններ ունեն: Հիշենք թեկուզ նույն Կ. Դեբյուսիի գնահատականը՝ տրված «Անտունին»-ին. «Եթե Կոմիտասը գրեր միայն «Անտունին», այդ էլ բավական կլիներ նրան խոշոր արվեստագետ համարելու»: Կոմիտասը մեր ազգային հանճարը լինելու իրողությամբ նաև մեծ է աշխարհի մեծերի մեջ, քանի որ վստ աստղի պես լուսավորում է մշակույթի անսահման հորիզոնները: Կոմիտաս վարդապետը իր հանճարով նույնքան նպաստեց մեր ժողովրդին՝ համաշխարհային ճանաչում գտնելու գործում, ինչքան մեր ճարտարապետությունն ու մատենագրությունը: Մեր ընկալմամբ որպես անհատ մեր իրականության մեջ նա՛ է միայն Մեսրոպ Մաշտոցի միակ զուգակշիռ մեծությունը, իսկ հայոց այս երկու Մասիսներն առանձին-առանձին՝ հավաքական հայ ճարտարապետությանը և հայ մատենագրությանը զուգակշիռ են:

Կոմիտաս վարդապետը կենդանի շունչ է ամեն հայի մեջ, հայի բնագրով թե գիտակցաբար հայ ապրել պարտավորեցնող կենդանի հսկիչ, ստեղծագործական սխրանքի մղող կենդանի ոգևորություն: Ահա թե ինչ է վկայում հայ գեղանկարչական արվեստի նահապետը՝ Մարտիրոս Սարյանը. «Ամեն օր նրա հետ եմ: Հենց որ վրձինս առնում եմ, գալիս է իր մեղեդիներով: Հայկական բնականորեն, առանց նրա նվագակցության, չի կարող գոյություն ունենալ: Մի՞թե հմարավոր է անօդ կամ աներգ կտավ ստեղծել»: Եվ մեր «անլուելի զանգակատան» մասին կոմիտասյան նույն ժողովրդական ակունքներից սնվող բանաստեղծ Հովհաննես Ժիրազի հետևյալ քառատողի մեջ, անշուշտ, խոր իմաստ կա.

«Թե չլիներ հայ ժողովուրդն աշխարհում,
Կոմիտասը այսքան քաղցր չէր լինի:

Թե չծնվեր մեծ Կոմիտասն իմաստուն՝

Հայ ժողովուրդն այսքա՛ն բարձր չէր լի-
նի»:





ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

(Գործ՝ նկարիչ Օֆելյա Վարդանյանի)